ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի իրավաբանական վարչության պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի փորձագետ Լիանա Այվազյանի 2025 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2026 թվականի ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածի

2025 թվականի ապրիլի 3-ից Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հաշվառման և մշտադիտարկման վարչության պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնում, 2025 թվականի հոկտեմբերի 9-ից իրավաբանական վարչությունում, մեկ տարի ժամկետով, ներգրավվել եմ որպես փորձագետ (պայմանագիր № 4 կնքված 03.04.2025 թ.-ին, պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 09.10.2025 համաձայնագիր):

Կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 26-ի «Փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» № 129-Ա հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետի համաձայն ներկայացնում եմ 03.10.2025-03.04.2026թ.թ. ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. Ապահովել եմ Կոմիտեի իրավաբանական վարչության պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնում հետևյալ գործառույթների իրականացումը,
2. պետական գույքի մասնավորեցման, օտարման, գրավի, նվիրաբերության, նվիրատվության, անհատույց օգտագործման, վարձակալության, Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում բջջային կապի սարքավորումներ տեղակայման ու սպասարկման և այլ պայմանագրերի (այսուհետ՝ պայմանագրեր), ինչպես նաև դրանցում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին համաձայնագրերի (համաձայնությունների) նախագծերի նախապատրաստման և կնքման իրականացնում,
3. պետական գույքի օգտագործման տրամադրման, օտարման և Կոմիտեի կողմից կնքված այլ պայմանագրերի հաշվառման իրականացնում,

4. նոտարական գրասենյակներում և (կամ) Կադաստրի կոմիտեի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումներում Կոմիտեի (Հայաստանի Հանրապետության) անունից հանդես գալու լիազորագրերի նախապատրաստում,
5. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

ՊԳԿԿ իրավաբանական վարչության պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի փորձագետ՝

Լիանա Այվազյան

«02» մարտի 2026թ.